# Նեոռեալիզմի և կանստրուկտիվիզմի համատեղելիությունն և կիրառելիությունը ՀՀ արտաքին քաղաքականության ուսումնասիրության հարցում

ՀՏԴ 327

***Սուքիասյան Նարեկ Ա.***
*ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, Քաղաքական գործընթացների, ինստիտուտների ամբիոն, ասպիրանտ, (Երևան, Հայաստան)*
nareksukiasyan@gmail.com

**Հանգուցաբառեր՝** Նեոռեալիզմ, Կոնստրուկտիվիզմ, Միջազգային հարաբերություններ, մեթոդոլոգիա, Միջազգային հարաբերությունների դպրոցների սինթեզ, արտաքին քաղաքականություն, Հայաստանի արտաքին քաղաքականություն, Միջազգային հարաբերությունների պարադիգմներ

## Compatibility and applicability of Neorealism and Constructivism in the study of Armenia's foreign policy

***Sukiasyan Narek A.***
*YSU, Faculty of International Relations,*
*Chair of Political Processes, Institutions, PhD student (Yerevan, RA)*
nareksukiasyan@gmail.com

**Abstract.** The goal of the article is to promote the synthesis of Neorealist and Constructivist schools of International Relations in the study of states' foreign policies and exemplify the necessity of such approach by the weaknesses of separately taken each theory in the explanation of Armenia's foreign policy. To that end, the article discusses issues of methodological compatibility of the two theories and the expediency of their synthesis for the study of Armenia's foreign policy. In that context, the article addresses some possible critique regarding the contradictory tensions between the theories and reveals the similarities of the two. The article argues that it is possible to increase the validity of research by the complementary approach to Neorealism and Constructivism, while accepting, that no single theory or even discipline alone is well positioned to describe, moreover explain the entirety of political realities in question, which further justifies the need of juxtaposition of more than one theoretical lens. The vast literature review reveals the academic consensus regarding the feasibility of combining the two theories. The article also treats some issues of the study of Armenian foreign policy that illustrate how any of those theories alone is incomplete in their explanations of the political reality. The article departs from the premise that research should not be kept hostage of ontological or empirical obligations towards any one theory. Moreover, the exclusive dedication of a researcher to any one single theory risks to fall into ethical traps and to overstretch arguments with weak explanatory basis because of self-imposed elimination of other relevant factors that are relevant for other theories.
**Key words:** Neorealism, Constructivism, International Relations, methodology, synthesis of IR schools, foreign policy, Armenian’s foreign policy, IR paradigms

## Совместимость и применимость Неореализма и Конструктивизма в изучении внешней политики Армении

***Сукиасян Нарек А.***
*ЕГУ, факультет международных отношений,*
*кафедра политических процессов, институтов, аспирант (Ереван, РА)*
nareksukiasyan@gmail.com

**Аннотация**. Цель статьи – содействовать синтезу неореалистической и конструктивистской школ международных отношений в изучении внешней политики государств, а также показать необходимость такого подхода на примере недостатков применения отдельно взятых теорий в объяснении внешней политики Армении. С этой целью в статье обсуждаются вопросы методологической совместимости двух теорий и целесообразности их синтеза для изучения внешней политики Армении. В этом контексте в статье рассматриваются некоторые возможные критические замечания относительно противоречий между теориями и выявляются их сходства. В статье утверждается, что можно повысить валидность исследования путем комплементарного подхода к неореализму и конструктивизму, признавая при этом, что ни одна теория или даже дисциплина в отдельности не в состоянии описать, а тем более объяснить всю полноту рассматриваемых политических реалий, что еще больше обосновывает необходимость сопоставления более чем одной теоретической линзы. Подробный обзор литературы выявляет академический консенсус относительно практической осуществимости объединения двух

теорий. В статье также рассматриваются некоторые вопросы изучения армянской внешней политики, которые иллюстрируют, что любая из этих теорий сама по себе является неполной в объяснении политической реальности. Статья исходит из того, что исследование не должно быть заложником онтологических или эмпирических обязательств по отношению к какой-либо одной теории. Более того, исключительная приверженность исследователя какой-либо одной теории чревата риском попасть в этические ловушки и перегрузить аргументацию слабыми объяснительными основаниями из-за самоисключения других релевантных факторов, имеющих отношение к другим теориям.
**Ключевые слова:** Неореализм, Конструктивизм, Международные Отношения, методология, синтез школ Международных Отношений, внешняя политика, внешняя политика Армении, парадигмы Международных Отношений.

Միջազգային հարաբերությունների ուսումնասիրության երկու հարացույցների՝ նեոռեալիզմի ու կոնստրուկտիվիզմի մեկտեղումը մեկ հետազոտական նպատակի համար առաջին հայացքից կարող է թվալ ոչ ուղղափառ մոտեցում, քանի որ հազվադեպ չեն հեղինակների կողմից բացառապես մեկ հարացույցի քվազի-գաղափարախոսական որդեգրման ու կիրառման դեպքերը՝ որպես քաղաքական աշխարհը բացատրող ամենակորող համալիրների: Թերևս նման ակնհայտ թյուր մոտեցումը արդեն կարող է արդարացնող փաստարկ համարվել մեկից ավելի հայեցակարգերի փոխլրացմամբ օգտագործելու համար, սակայն անհրաժեշտ ենք համարում հասցեագրել նման սինթեզի պարագայում ծագող հնարավոր խնդիրներն ու նպատակահարմարությունը, քանի որ համակցման նման ընտրությունը ինքնանպատակ չէ ու չի կրում կամայական բնույթ: Այդպիսով, հոդվածն անդրադառնում է երկու խումբ հարցերի՝ ա) երկու հայեցակարգերի տեսամեթոդական համատեղելիության փաստարկներին և բ) ՀՀ արտաքին քաղաքականության ուսումնասիրության խնդիրների համատեքստում ընտրված սինթեզի նպատակահարմարությանը: Առաջին խումբը պատասխանում է հետևյալ հարցերին. արդյոք կա՞ անհրաժեշտություն համատեղել նեոռեալիզմն ու կոնստրուկտիվիզմը, արդյոք դրանք չե՞ն հակասում, ի՞նչ ընդհանրություններ ունեն և արդյոք հնարավո՞ր է համատեղել այդ երկուսը: Երկրորդ՝ ավելի սեղմ խմբում կանդրադառնանք հարացույցների համատեղման անհրաժեշտությանն ու նպատակահարմարությանը ՀՀ արտաքին քաղաքականության ուսումնասիրության խնդիրների տեսանկյունից:

Սկսելով այն հարցից, թե արդյոք կա՞ հարացույցների համատեղման անհրաժեշտություն պետք է վերհիշել, որ վերջիններիս իրականում բարդ համակարգերը բացատրելու համար ստեղծված մոդելներ են, որոնցից յուրաքանչյուրը այդ գործում խորհուրդ է տալիս գերադասել գործոնների մի խումբ մեկ այլ խմբից՝ ի շահ բացատրողական արդյունավետության, աշխարհի մասին գեներացվող գիտելիքի պարզության և գործածելիության: Հայեցակարգերը չեն կարող հետազոտողին ստիպել ստանձնել օնտոլոգիական կամ էմպիրիկ պարտավորություններ որևէ մի տեսության նկատմամբ [**1**, էջ 53]: Ավելին, հետազոտողի «նվիրումը» բացառապես մեկ հարացույցին անտեղի է ոչ միայն հետազոտական էթիկայի տեսանկյունից, այլ նաև հղի թերհիմնավորումներով և թույլ բացատրական ներուժով, քանի որ ցանկացած հարացույց, նախապատվություն տալով որևէ խումբ փոփոխականների ու տվյալների, անտեսում է մեկ այլ խումբ՝ արհեստականորեն չեզոքացնելով դրանց վերաբերելիությունը քաղաքական իրականության նկատմամբ: Ինչպես խոստովանում է մինչ այժմ ստեղծված թերևս ամենաամբողջական քաղաքական տեսություններից մեկի հեղինակ Միրշհայմերը, անգամ իր տեսությունը վավերական է հետազոտությունների մոտ 70%-ի դեպքում [**2**, էջ 26] Հետևաբար, փոխլրացնող հարացույցների տեղին համատեղման պարագայում հնարավոր է բարձրացնել հետազոտության վավերականության մակարդակը՝ այնուամենայնիվ ընդունելով, որ գոյություն չունի որևէ գաղափարների համակարգ, որն իվիճակի է բացատրել քաղաքական իրականությունն իր ամբողջականության մեջ, իսկ նմանը ստեղծելու հավակնությունը դժվար թե հնարավոր լինի բավարարել միայն քաղաքագետների ջանքերով: Այսպիսով, մեր խնդիրը բնավ չի կայանում «ճշգրիտ» հարացույցի ընտրության ու կիրառման մեջ, այլ մեր մոտեցումը բխում է այն համոզմունքից, որ բոլոր հիմնական հարացույցները խիստ թերի են և դրանց պետք է վերաբերվել որպես փոխլրացնող, ոչ թե մրցող մոդելների [**3**, էջեր 26-27]: Հարացույցների նկատմամբ մրցակցային փոխբացառող մոտեցումը ապրորի տապալում է փորձառական մի շարք հնարավորություններ [**1**, էջեր 53-54], մինչդեռ դրանց համատեղումը ճանապարհ կարող է բացել տեսությունների ներուժը արձակելու համար [**2**, էջ 26]:

Կոնստրուկտիվիզմն ու նեոռեալիզմը փոխլրացման կարիք ունեն մի շարք պատճառներով: Ներկայացնենք դրանցից նշանակալիները՝

- Նեոռեալիզմի տեսականացման փորձերում առավելապես բացակա է նորմերի ու գաղափարների ուժային ու շահադիտական

էությունը, որը կարելի է լրացնել կոնստրուկտիվիզմի միջոցով [**4**, էջ 255]:

- Ընդհանրապես ռեալիզմի ու մասնավորապես նեոռեալիզմի կենտրոնացումը նյութական ուժի, կարողությունների ու աշխարհագրության վրա ենթադրում է իրավիճակային ստատիկություն [**5**, **6**] մինչդեռ ինքնության ու խոսույթների հանդեպ կոնստրուկտիվիստիկան «հետաքրքրությունը» ավելի լավ է դիրքավորված՝ բացատրելու քաղաքական փոփոխությունները [**7**, էջ 41]:
- Ավելին, կոնստրուկտիվիզմն առանց նեոռեալիստական փոփոխականների նմանապես թերի է, քանի որ «էթիկական կառուցվածքն առանց ուժի նույն չափ ստատիկ է […], որքան Ուոլցի ուժային կառուցվածքի տեսությունը առանց էթիկականի» [**8**, էջ 337]:
- Նեոռեալիզմի հիմնական կանխավարկածներից է այն, որ պետությունները (պետական դերակատարները) բանական դերակատարներ են ու պարտավոր են կոնկրետ արտաքին հանգամանքներումի դեպքում գործել կոնկրետ կերպ, կամ ընտրել որոշ սահմանափակ այլընտրանքներից: Սակայն նման մոտեցումը նախ ենթադրում է, որ պետական դերակատարները լիարժեքորեն տեղեկացված են իրենց շրջապատող հանգամանքներից (հակառակորդի մտադրություններ, լիարժեք հետախուզական տեղեկատվություն), ապա շարունակում այն ենթադրությամբ, որ տվյալ դեպքը ուսումնասիրող հետազոտողը տիրապետում է հանգամանքների մասին նույն տեղեկատվությանը ինչ որոշում կայացնողը: Նման մոտեցումը ակնհայտորեն թերի է մեթոդաբանորեն, մինչդեռ կոնստրուկտիվիզմի հետ համատեղելու պարագայում պետական դերակատարների կողմից գոյապահպանմանն ուղղված ծախս-օգուտ հաշվարկների բանական բացատրությանը (կամ դրա բացակայությանը) լրացվում է սեփական ինքնության, հակառակորդի ինքնության, սպառնալիքների ընկալումների մասին միջամտող փոփոխականների շնորհիվ [**9**]:
- Նեոռեալիզմը քննադատվել է պետական միավորների՝ (unit level) արտաքին գործոններից անկախ նախաձեռնողական գործողությունների (agency) ազդեցությունն անտեսելու համար: Այսինքն այն ստեղծել է պետականակենտրոն կանխավարկածներով լի հարացույց, բայց չի ձևակերպել պետական դերակատարի մասին հայեցակարգ՝ սահմանափակվելով «սև արկղի» կամ «բիլլիարդի գնդակի» կոնցեպտուալ մինիմալիզմով: Մինչդեռ պետականակենտրոն հետազոտության առանցքային փաստարկները մինչ այժմ ձեևակերպվել են հենց կոնստրուկտիվիստ հեղինակների կողմից[1] [**2**, էջ 20]:
- Ի վերջո, նեոռալիզմը ևս իր հերթին լրացնում է կոնստրուկտիվիստների կողմից նախընտերելի փոփոխականների շարքը, քանի որ կոնստրուկտիվիստական գործոնը «չի աշխատում վակուումի մեջ: Ընդհակառակը, դա համատեքստ է համատեքստի մեջ […]: Անարխիկ միջավայրը ներառում է բոլոր գործընթացները և ներազդում դրանց վրա, բայց քանի դեռ ներքին գործընթացները ժամանակի ընթացքում պարտադրում են սեփական շահերն ու վարքագիծը, դրանց առանձնահատկությունները շարունակելու են ազդել դերակատարների որոշումների վրա» [**10**, էջ 20]:
- Պետությունները հաճախ գործում են ավելի ծավալապոշտորեն [**11**] կամ բալանսավորում են ավելի պակաս [**12**] քան ռեալիստները կարող են կանխատեսել կամ բացատրել, որը, սակայն, հնարավոր է լրացնել կոնստրուկտիվիզմի միջոցով [**13**]:

Փոխլրացման անհրաժեշտության մասին վերոնշյալ փաստարկների վերհանումը չունի զուտ տեսական նպատակ, այլ միտված է մատնանշելու առանձին-առանձին վերցված նեոռեալիզմի և կոնստրուկտիվիզմի անարդյունավետությունը՝ մասնավորապես ՀՀ արտաքին քաղաքականությանը վերաբերող հետազոտական հարցադրումներին ոչ լիարժեք պատասխաններ տրամադրելու, ինպես նաև քաղաքական խոսույթում հաճախ հնչող մերձգիտական թեզեր առաջ քաշելու արտահայտումներում: Մասնավորապես, ՀՀ-ՌԴ հարաբերությունները, լինելով բազմաշերտ ու համընդգրկուն, հնարավոր չէ բացատրել բացառապես ուժային ու անվտանգային (նեոռեալիզմ) կամ սոցիալական ու ինքնութենական (կոնստրուկտիվիզմ) գործոններով: Նման մոտեցման սխալականությունը ակնհայտ է դառնում նշված տեսությունների անգամ ամենապարզ կանխավարկածների կիրառման դեպքում: Օրինակ, եթե ՀՀ դաշինքային քաղաքականությունը ուսումնասիրենք նեոռեալիզմի սպառնալիքների հավասարակշռման հայեցակարգով ու անտեսենք կոնստրուկտիվիզմին հատուկ ինքնութենական ու ընկալումների մասին կանխավարկածները, ապա որոշ նեոռեալիստներ անմիջապես կպնդեն, որ ՀՀ ամենաօպտիմալ արտաքին քաղաքականությունը ենթադաշնակցումն է Թուրքիային: Իսկ հիմնվելով բացառապես կոնստրուկտիվիստական գործոնների

[1] Տե՛ս [**16**]:

վրա՝ հետազոտողը կարող հարց բարձրացնել, թե ինչու ՀՀ-ն իր դաշինքային քաղաքականությունը չի կառուցում, օրինակ Լիբանանի միջոցով, ում հետ կիսում է բարեկամական հարաբերություններ և այդպես էլ չգտնել հիմնավոր պատասխան՝ անտեսելով ուժային գործոնները: Այսպիսով ակնհայտ է, որ հետազոտական նպատակ-խնդիրների համակողմանի ուսումնասիրման համար ընտրված հայեղակարգերի համատեղումը անհրաժեշտություն է:

Սակայն հաջորդիվ, առաջ է գալիս այն հարցը, թե արդյո՞ք այս հայեցակարգերը գիտականորեն համատեղելի են, որի *դրական պատասխանի* շուրջ առկա է արդեն իսկ ձևավերված գիտական կոնսենսուս [**8**, **14**, **13**, **9**, **15**]: Ներկայացնենք այն հիմնարար կանխավարկածները որոնք ընդհանուր են երկու հայեցակարգերի համար և իմացաբանորեն հնարավոր են դարձնում դրանց սինթեզը: Նմանատիպ կանխավարկածներից են՝

- Նախ և առաջ երկուսի հիմնարար համաձայնությունը կայանում է քաղական աշխարհում նյութական և ուժային գործոնների կարևորության ընդունման մեջ՝ ընդհուպ մինչև Վենդտի՝ որպես ռեալիստ հանդես գալը [**16**, էջեր 13-14; **17**, էջ 257]:
- Երկուսն էլ համաձայն են, որ փոքր պետությունների հիմնական շահը ինքնապահպանումն է, մինչդեռ մեծ տերություններին անհնազանդացնում են գլոբալ կամ տարածաշրջանային գերակայությունը [**7**, էջ 37]:
- Ինչպես ռեալիստները, կոնստրուկտիվիստները նույնպես ընդունում են որ քաղաքական, ինստիտուցիոնալ, սոցիալական և իրավական միջավայրերը, որով շրջապատված են բանական դերակատարները, իրենց իսկ գործունեության արդյունքն են [**17**, էջ 257]:
- Գիտական պոզիտիվիզմը լայն մեկնաբանությամբ ընդգրկում է թե՛ նեոռեալիստական, թե՛ կոնստրուկտիվիստական ժամանակակից մտածողության ձևերը: Երկուսի համար էլ ընդհանուր է հետմոդեռնիստական սոցիալական գիտությունների, «գիտական մարդու» [**18**] հանդեպ հակակրանքը և համակրանքը պատմական համատեքստերի նկատմամբ [**8**, էջ 332]:
- Երկու հայեցակարգերի համար ուսումնասիրության կենտրոնական առարկաներից է միջազգային քաղաքականության կառուցվածքը. նեոռեալիզմի համար՝ թե ինչպես է այն ձգտում բալանսավորման, կոնստրուկտիվիզմի համար՝ թե ինչպես է այն ձևավորվում ու փոփոխվում: Դժվար չէ գտնել տեսակետներ ամենանվիրյալ նեոռեալիստների ու կոնստրուկտիվիստների աշխատություններում, որոնք կարելի է շփոթել մյուս մոտեցումը ներկայացնող հեղինակի կամ մոտեցումների հետ, ինչպես օրինակ կոնստրուկտիվիստ Վենդտի դեպքում, ով պնդում է, որ պետությունները ունիտար դերակատարներ են [**16**, էջ 197]՝ ընդգծված «ես»-ով, մինչդեռ ռեալիզմի հիմնադիրներից Թուկիդիդեսի՝ Սպարտայի ու Աթենքի բալանսավորման դասագրքային օրինակում նյութական գործոնների կողքին ներմուծված են սպարտացիների կողմից սպառնալիքի ընկալման ու աթենացիների ինքնության գործոնները [**2**, էջ 24]:
- Ավելին, նեոռեալիզմի հիմնադիրներից Ուոլթը արաբական պետությունների բալանսավորման քաղաքականությունն ուսումնասիրելիս կարևորագույն նշանակություն է տալիս գաղափարներին ի հակադրություն նյութական ուժի և սահմանված նորմերի խախտումը դիտարկում որպես սպառնալիքի կարևոր աղբյուր [**19**, էջ 149; **15**, էջ 15]: Ավելի մոտեցնելով նեոռեալիզմը կոնստրուկտիվիզմին՝ Ուոլթը չի համարում նյութական ուժը ինքնին սպառնալիք, այլ կարևորում է ուժի հետևում առկա մտադրությունը և այն ընկալողի պատկերացումները [**19**, էջ 179], ընդունում գաղափարախոսական ու նորմատիվ հիմքը որպես դաշինքային քաղաքականության վրա ազդող գործոններ [**19**, էջեր 181-217], հեռանալով կառուցվածքի վրա ռեալիստների գերկենտրոնացումից՝ հետազոտական դաշտ է վերադարձնում պետական դերակատարին (unit level analyses) և միջազգային համակարգի կառուցվածքի պարտադրանքիցներից զատ՝ վերագրում նրան նախաձեռնողական հատկանիշներ [**15**, էջ 17], ինչպես նաև կարևորում որոշում կայացնողների ընկալումների ազդեցությունը իրենց որդեգրած քաղաքականության վրա [**19**, էջեր 25-26] :

Երկու հարացույցների միջև առկա ընդհանրությունների այս ոչ ամբողջական ցանկը և հատկապես վերջին կետում արտացոլված նեոռեալիզմի հիմնական հեղինակներից Ուոլթի՝ կոնստրուկտիվիզմին առավելագույնս մոտեցած կանխավարկածները լրացնում են երկու հարացույցների համատեղելիության շուրջ գիտական կոնսենսուսը: Վերջապես, համարում ենք, որ երկու հարացույցների սինթեզը անհրաժեշտություն է թերևս ցանկացած պետության, բայց մասնավորապես ՀՀ արտաքին քաղաքականության ուսումնասիրման պարագայում:

Ցուցադրենք ՀՀ արտաքին քաղաքականությանը վերաբերող մի քանի իրավիճակներ, որոնք մատնանշում են մեկ հարացույցի կիրառ-

ման թերացումները և ապացուցում նեոռեալիզմի ու կոնստրուկտիվիզմի համակցման անհրաժեշտությունը մեկ հայեցակարգի բացատրական անկարողությունը մյուսով լրացնելու համար: Այսիպսով, նեոռեալիզմի պրիզմայով կարելի է ուսումնասիրել Հայաստանի արտաքին անվտանգային միջավայրի փոփոխությունները 2008 թ. ռուս-վրացական պատերազմի, 2016 թ. Ապրիլյան պատերազմի և 2020 թ. արցախյան երկրորդ պատերազմի արդյունքում (ինչպես նաև դրանց հանգեցրած մինչպատերազմական գործընթացները): Սակայն դրանցից յուրաքանչյուրի պարագայում տեսականորեն հնարավոր է առաջարկել գործընթացների այլընտրանքային զարգացումներ ու ընթացք, որոնք չեն բացառվում նեոռեալիստական կանխատեսումների կողմից, ինչը ստեղծում է անհրաժեշտություն ներմուծելու կոնստրուկտիվիստական փոփոխականներ՝ հիմնավորելու համար գործընթացների հենց նման ընթացքը ու ամբողջացնելու դրանց դինամիկան:

Ըստ նեոռեալիզմի՝ պետությունը բալանսավորելուց բացի հնարավորություն ունի ենթադաշնակցել սպառնալիքի աղբյուրին: Տեսականորեն Հայաստանի պարագայում դա նշանակում է ենթադաշնակցում Թուրքային (թուրք-ադրբեջանական տանդեմին) կամ «երրորդ ուժի բացառում»: Թեև անգամ նեոռեալիզմի միջոցով է հնարավոր բացատրել Հայաստանի՝ նման քաղաքականություն չորդեգրելու պատճառները, սակայն կոնստրուկտիվիզմն է, որ ունակ է վեր հանելու այն նորմերի, ինքնության, արժեքների ու խոսույթների ամբողջությունը, որն անհրաժեշտ է նման քաղաքականությունից հրաժարվելու հայկական քաղաքական էլիտայի որոշումը բացատրելու համար:

Նեոռեալիզմը նշում է, որ արտաքին սպառնալիքը բալանսավորելու հարցում կարևոր նշանակություն ունեն արտաքին դերակատարների սպառնալից մղումները, սակայն կենտրոնանալով համակարգի վրա, նեոռեալիզմը գրեթե ոչ մի գործիք չունի ուսումանսիրելու այդ մղումների ընթերցումը երրորդ պետությունների կողմից՝ այսինքն անկարող է բացատրել վերջիններիս ընկալումների ազդեցությունը իրենց որդեգրած սպառնալիքի բալանսավորման քաղաքականության վրա: Այս բացը ՀՀ արտաքին քաղաքականության ուսումնասիրության մեջ հնարավոր է լրացնել կոնստրուկտիվիզմի գործիքակազմի միջոցով:

ՀՀ արտաքին անվտանգային միջավայրի զարգացումները վերոնշյալ երեք տարածաշրջանային հակամարտությունների թեժ փուլերից հետո ու հատկապես 2016 թ. և 2020 թ. արցախյան պատերզմաների արդյունքում ստեղծեցին ոչ միայն նեոռեալիստական բնույթի նյութական և համակարգային նոր դասավորություն ու հանգամանքներ, այլ նաև պատճառ դարձան նոր նորմերի կենսաշրջանի կամ հին նորմերի վերարտադրման համար, որոնք լրացնում են ՀՀ դաշինքային քաղաքականության հիմնապատաճռների շարքը: Դրանք բացատրելու համար անհրաժեշտ է վերոնշյալ երկու հարացույցների սինթեզի կիրառումը:

Հայ-ռուսական հարաբերություններում կարևոր տեղ են զբաղեցնում այն բազմակողմ կառույցները, որոնց մաս են կազմում խնդրո առարկա պետությունները: Նեոռեալիզմը՝ և ընդհանրապես ռեալիզմը գրեթե անկարող է բացատրել պետությունների հարաբերությունները նման կառույցներում մասնավորապես, իսկ նման կառույցների գոյությունն ընդհանրապես: Դրանց վերաբերող հարցերին ռեալիստները հիմնականում առաջարկում են պարզունակ բացատրություն. պետությունները ստեղծում և մաս են կազմում միջազգային կառույցներին բացառապես դրանք սեփական շահերին ծառայեցնելու նպատակով՝ հետաքրքրված լինելով միայն սեփական բացարձակ շահույթով [**20**, էջ 135]: Իհարկե, հայ-ռուսական հարաբերությունների ինստիտուցիոնալ շերտերը լիարժեք ուսումնասիրելու համար համար անհրաժեշտ կլինեն այլ հարացույցների ներմուծում ևս՝ օրինակ լիբերալ ինստիտուցիոնալիզմի, այնպես էլ լրացուցիչ այլ մեթոդների կիրառում, սակայն դրանց ուսումնասիրության համար կոնստրուկտիվիմզը նույնպես տրամադրում է բավարար հիմքեր ռեալիստական բացը առնվազն առաջնային ծագող հարցերի դեպքում լրացնելու համար:

Երկու հարացույցների սինթեզի անհրաժեշտությունը հիմնավորող պատճառների շարքը կարելի է շարունակել, սակայն դրանք այս կամ այն կերպ վերանշյալ պատճառների ենթապատճառներ են և մեծապես ու մեղոպես ինքնաակնհայտ: Այսիպիսով, հոդվածը ամփոփում միջազգային հարաբերությունների տեսության դպրոցներից նեոռեալիզմի և կոնստրուկտիվիզմի հարացուցային խնդիրների վերլուծությունը՝ դրանց համատեղման համատեքստում, հիմնավորում դրանց փոխլրացման անհրաժեշտությունն ու այդ սինթեզի առանձնահատկությունները, ինչպես նաև փաստարկված կերպով հիմնավորում դրանց համատեղման անհրաժշետությունը ՀՀ արտաքին քաղաքականության ուսումնասիրման պարագայում՝ վեր հանելով դրանց առանձին-առանձին կիրառման դեպքում առաջացող բացը տեսական հնարվորությունների և իրականության միջև:

**Օգտագործված գրականության ցանկ**


1. **Fearon J. and Wendt A.,** "Chapter 3: Rationalism v. Constructivism: A Skeptical View," in Handbook of International Relations, London, Thousand Oaks, New Delhi, SAGE Pablications, 2002, pp. 52-72.
2. **Wallin C.,** "Re-conceptualizing the Pursuit of National Interests in World Politics: Augmenting the realist concept of national interests to include constructivist theories on identity," Spring 2014. [Online]. Available: https://www.diva-portal.org/smash/get/diva2:728411/FULLTEXT01.pdf.
3. **Finnemore M.,** National Interests in International Society, Ithaca: Cornell University Press, 1996.
4. **Price R.,** "Detecting ideas and their effects," in The oxford handbook of contextual political analysis, Oxford, Oxford University Press, 2006, pp. 252-265).
5. **Ruggie J.,** "Continuity and Transformation in the World Polity: Toward a Neorealist Synthesis," World Politics, vol. 35, no. 2, pp. 261-285, 1983.
6. **Walker R. B. J.,** "Realism, Change, and International Political Theory," International Studies Quarterly, vol. 31, no. 1, p. 65–86, 1987.
7. **Theys S.,** "Constructivism," in International Relations Theory, Bristol, E-International Relations Publishing , 2017, pp. 36-42.
8. **Barkin S.,** "Barkin, S 2003, 'Realist Constructivism', The International Studies Association, vol. 5, no.3, pp. 325-342, p. 338," The International Studies Association, vol. 5, no. 3, pp. 325-342, 2003.
9. **Rogers Z.,** "Realism and Constructivism as Compatible Epistemologies," 30 10 2013. [Online]. Available: https://www.e-ir.info/2013/10/30/realism-and-constructivism-as-compatible-epistemologies/.
10. **Sterling-Folker J.,** "Realist Environment, Liberal Process, and Domestic-Level Variables," International Studies Quarterly, vol. 41, no. 1, p. 1–25, 1997.
11. **Snyder J.,** Myths of Empire: Domestic Politics and International Ambition, New York: Cornell University Press, 1991.
12. **Schweller R.,** Unanswered Threats: Political Constraints on the Balance of Power, Princeton: Princeton University Press, 2006.
13. **Mouritzen H.,** "Combining 'incompatible' foreign policy explanations: how a realist can borrow from constructivism," Journal of International Relations and Development, vol. 20, p. 631–658, 2017.
14. **Wæver O.,** "Identity, Communities and Foreign Policy: Discourse Analysis as Foreign Policy Theory," in European integration and national identity : the challenge of the Nordic states, New York, Routledge, 2002, pp. 20-50.
15. **Salem A. A.,** "Realism and Constructivism: Intra-Paradigm Dialogues and Reconciliations," in International Relations in Dialogue, London, 2010.
16. **Wendt A.,** Social Theory of International Politics, Cambridge : Cambridge University Press , 1999.
17. **Grant A.,** "Agential Constructivism and Change in World Politics," International Studies Review, vol. 20, no. 2, p. 255–263, 2018.
18. **Morgenthau H. J.,** Scientific Man Versus Power Politics, London: Latimer House Ltd., 1947.
19. **Walt S. M.,** The Origins of Alliances, New York: Cornell University Press, 1987.
20. **Lamy S.,** "Contemporary mainstream approaches: neo-realism and neo-liberalism," in The Globalization of World Politics: An Introduction to international relations, Oxford, Oxford University Press, 2014, pp. 126-140.



*Сдана/Հանձնվել է՝ 11.11.2021*
*Рецензирована/Գրախոսվել է՝ 18.11.2021*
*Принята/Ընդունվել է՝ 25.11.2021*